

մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քսութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւն մեռելոց, ի դատաստանսն յախտեանից հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւն երկնից եւ ի կեանս յախտեանականս,»:

“Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ՝ ոչ էր Որդին, կամ էր երբեմն, յորժամ՝ ոչ էր սուրբ Հոգին, կամ՝ յոչեից եղեն, կամ՝ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ զսուրբ Հոգին, եւ թէ փոփոխելի են կամ՝ այլայլելի, զայնպիսին նշովէ կաթողիկէ եւ սուաքելական եկեղեցի:”

Աոյն ձեւն է որ կը գործածուի թէ մկրտութեան աստեւ, թէ պատարագի մէջ եւ թէ քրիստոնէական վարդապետութեանց մէջ բերնուց կը սորվեցուի, ըլլայ կաթողիկեաց ըլլայ չկաթողիկեաց քով, եւ հաւատացեալք նոյնը կը զուցեն իրենց աղօթից մէջ: Աւստի ամենեքին եւ խրաբանչիւր որ կրնանք իրաւամբք ուզել որ զիտնան այս դաւանութեան ծագումն ու հեղինակը, եւ որն որ ասոնցմէ աւելի է, անցեալ՝ տարուան Ալիքիկոյ հայրապետութեան՝ Տիեզերական ժողովոյն պատճառաւ՝ ընդհատուած Սիւնհոդոսին ալ, որն որ մեր եկեղեցական գրքերը պիտի որ աչքէ անցնէր, կրնայ սոյն խուզարկութիւնը դնէ դոյզն օգտակարութիւն մ՝ ունենալ: Աոյն խուզարկութեան պատասխանը դժուարին բան մը չէր մեր հարցը մէջէն ամենէն առաջիններուն՝ որոնք նոյնը սկսան գործածել. սակայն անոնց յաջորդացը կամաց կամաց դժուարացաւ՝ ասոր վրայ հաշիւ տալը:

Երբէն ՅԵՔ դարուն վերջերը մեր նախնիք սոյն հանգանակը՝ “Նիկիականին հետ նոյնացուցին,՝Նիկիական հանգանակի տեղ զրին: Եբրահամ՝ կաթողիկոսի՝՝ ատեններէն, մանաւանդ թէ անկէ ալ քիչ մը յառաջ, Վրթմանէս Քերթոզէն՝ որն որ Եբրահամ չոնտորուած տեղապահ էր ի դատարկութեան ակթոսոյն³, սկսաւ աս անյատուկ կոչումը, որչափ մեր ծանօթութիւնները կը հասնին, իրենց առ Ալիքիոն Վրաց կաթողիկոս զրած թղթերուն մէջ: “Ընդ ամենայն տեղիս, կ'ըսէ տեղապահը, յեկեղեցիս ուղղափառաց յետ ընթեռնոյ զաւետարանն, որ ի Նիկիա սահմանեցաւ զհաւատն ասեմք:” Իսկ Եբրահամ՝ առ Ալիքիոն գ. թղթոյն մէջ կը գրէ. “Նշաններն Հաբն՝ որ ի Նիկիա ժողովեցան, այսպէս ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեան. Հաւատալ, ա-

¹ Այսինքն է 1869ին: Ծ. Հրտ.:

² Եբրահամ՝ կաթողիկոսական ակթոսը նստած է ըստ Հեղինակին ուրիշ մէկ գրութեանը, ոչ եթէ 594ին, ինչպէս ցայժմ կը համարուէր, այլ 607ին. ըստ այսմ ցայսօր կարծուածէն 13 տարի վերջը: Ծ. Հրտ.:

³ Միտ դնելու է որ Վրթմանէս Քերթոզը միայն է որ Վրթմանէս Քերթոզ տեղապահ եղած է, եւ ոչ եթէ նա եւ Մովսէս Բ. ի կաթողիկոսութեան ժամանակ, ինչպէս սովորաբար կը գրուի: Այս ալ պարտական ենք Հեղինակիս: Ծ. Հրտ.: